ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/58, 23.04.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Պատվիրատու՝ «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Թվային ռենտգեն համալիրի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար թվային ռենտգեն սարքավորման համալիրի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.04.2020թ.-ի ժամը 16.00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին մերժել «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի հայտը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

CONCERN-ENERGOMASH

"Concern-Energomash" CJSC
"Կոնցեռն-Էներգոմաշ" ՓԲԸ

Azatutyan avenue 26/8, Yerevan 0014, Armenia
0014, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 26/8

Հեռ./Tel.: +374 10 20 97 77, 20 97 75
E-mail: info@c-e.am, www.c-e.am

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
ք. Երևան, Մ. Աղամյան փող. 1

Բողոք ներկայացնող՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Իրավ հասցե՝ ք. Երևան,Արգումանյան 32-10
Գործ. հասցե՝ք. Երևան, Ազատության պող.26/8
Հեռ. +374 11878717, +374 98 799777
Էլ. փոստ՝ lawyer@c-e.am

Պատվիրատու՝ «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ
Հասցե՝ ք.Գյումրի Գ.Նժդեհ 5

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1»
թվային ռենտգեն սարքավորման համալիրի ձեռքբերում

Բողոք

Վեճի առարկան, փաստերը, ապացույցները և պահանջը.

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ն (Այսուհետ՝ Պատվիրատու) թվային ռենտգեն սարքավորման համալիրի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (Այսուհետ՝ Ընթացակարգ), որը հրապարակվել է սույն թվականի մարտի 30-ին՝ ժ 02:49:00-ին, www.gnumner.am կայքում:

Հրավերի բացումը իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով՝ 08.04.2020թ. ժ.12:00-ին:

Ընթացակարգին մասնակցության հայտ էին ներկայացրել հետևյալ երեք կազմակերպությունները՝ «Ավէմեդ» ՍՊԸ-ն, «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (Այսուհետ նաև Ընկերություն):

Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (Այսուհետ՝ Օրենքի) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և հրավիրել մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մինչև սույն թվականի ապրիլի 14-ը ժամը 12:00 (Հայտերի բացման նիստի N 2 արձանագրություն՝ կազմված 09.04.2020թ.):

Բանակցությունների արդյունքում «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն նվազեցրել է գինը, և հանձաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել նշյալ կազմակերպությանը, իսկ 2-րդ տեղ զբաղեցնող՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին: Ընկերությունների կողմից ներկայացված ապրանքի ամբողջական բնութագրերը տրամադրվել են գնահատող հանձնաժողովին՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման համար (Հայտերի գնահատման N3 արձանագրություն՝ կազմված 14.04.2020թ.):

Ապրիլի 17-ին հանձնաժողովը որոշել է հաղթող մասնակից ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ին (Հայտերի գնահատման N4 արձանագրություն՝ կազմված 17.04.2020թ.) և ապրիլի 20-ին ժ14:54:04-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին ենթակետի համաձայն՝

«Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

«Ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված **փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին**, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և **ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը**»:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

«6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին»:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

«3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է»:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Բողոքի հիմնավորումները.

Գտնում ենք, որ Գնահատող հանձնաժողովը պատշաճ կերպով չի գնահատել «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացրած ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը, ինչի արդյունքում եկել է սխալ եզրահանգման: Այսպես.

Գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացվեր կոնկրետ սարքավորման բնութագիր՝ հիմնվելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիր-ժամանակացույցով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների վրա: Սակայն «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սարքավորման բնութագրում կան այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ «Համալիրը պետք է ապահովի թվային ռենտգենոգրաֆիա», «Հորիզոնական նկարահանման սեղանի դեկան պետք է ազատորեն տեղաշարժվի 6 ուղղություններով…», «Պատկերի օպտիմալ տեսքով ստացման համար բավական պետք է լինի նշել հետազոտվողի տվյալները…», «պատկերներների հետ աշխատելու ժամանակ պետք է հնարավոր լինի մեծացնել պատկերը…»: Նման ձևակերպումներով չի կարող նկարագրվել կոնկրետ սարքավորում, և մասնակցի կողմից իր առաջարկած սարքի վերաբերյալ այսպիսի ցանկություն արտահայտող ձևակերպումները Գնահատող հանձնաժողովը չպետք է համարեր հրավերի պահանջներին բավարար:

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագիրը թույլ է տալիս ենթադրել, որ վերջինս պարզապես կրկնօրինակել է Պատվիրատուի պահանջը, ինչի պատճառով «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացրած ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը առնվազն կասկածների տեղիք է տալիս: Վերոնշյալի համատեքստում մեր ընկերությունը կատարել է շուկայի փոքրիկ հետազոտություն՝ ներկայացված սարքավորման տվյալների իսկությունը հաստատելու նպատակով:

Միաժամանակ, Ընկերությունը դիմել է Պատվիրատուին՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սարքավորման վերաբերյալ լրացուցիչ տվյալներ ստանալու, բայց հավելյալ տեղեկատվության համար Պատվիրատուն ուղղորդել է դիմել «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ին: Արդյունքում կապ է հաստատվել տվյալ սարքավորումն արտադրող ընկերության հետ, որը տրամադրել է մանրամասն տեղեկատվություն սարքը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ:

Արտադրողի կողմից տրամադրված և «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրիչների վերաբերյալ տեղեկատվության համադրման արդյունքում բացահայտվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- Հորիզոնական նկարահանման սեղանի դեկայի երկայնական տեղաշարժը առնվազն՝ 100 սմ (ըստ մեր ունեցած տեղեկության՝ պահանջվող տեսակի սեղանի մոդիֆիկացիան ունի երկայնական տեղաշարժ՝ 48սմ, իսկ սեղանի բարձրությունը չկառավարող սեղանի նույն ցուցանիշը՝ 80սմ, որից երկուսն էլ չեն համապատասխանում պահանջին, իսկ երկրորդը նաև չունի մոտորիզացված բարձրության կառավարում),
- Հետազոտվողի թույլատրվող քաշը՝ 220կգ. (ըստ մեր ունեցած տեղեկության՝ պահանջվող տեսակի սեղանի պացիենտի թույլատրվող մաքսիմալ քաշը՝ 135կգ է, իսկ սեղանի բարձրությունը չկառավարող սեղանի նույն ցուցանիշը՝ 200կգ, որից երկուսն էլ չեն համապատասխանում պահանջին, իսկ երկրորդը նաև չունի մոտորիզացված բարձրության կառավարում),
- Սնուցման աղբյուրի հզորությունը՝ 71 կՎտ. (մեր պահանջին տրամադրել նման հզորությամբ սնուցման աղբյուրով մոդիֆիկացիա՝ արտադրողը պնդեց, որ ստանդարտ 50կՎտ հզորությամբ սնուցման աղբյուրի հզորությունից շեղում-մոդիֆիկացիա արվում է միայն մեծաքանակ պատվերի դեպքում, իսկ նման մոդիֆիկացիա նշված չէ արտադրողի կողմից տրամադրվող որևէ նյութի մեջ: Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը չի հավաստել նման մոդիֆիկացիայի առկայությունը, որպիսի պայմաններում Հանձնաժողովը չէր կարող **հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ** հետևության գալ):

  Արդյունքում Գնահատող հանձնաժողովը հակառակ օրենքի պահանջներին,

- «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ից չի պահանջել և չի ստացել նշվածցուցանիշների հավաստիությունն ապացուցող փաստաթղթեր, այդ թվում՝ վերոնշյալ բոլոր մոդիֆիկացիաներով մոդելի համար CE mark հավաստագրի պատճեն (ինչը հանդիսանում է համապատասխանության գնահատման կարևոր պայման), որն իր մեջ պետք է պարունակի 71կՎտ սնուցման աղբյուր ունեցող

մոդիֆիկացիայի կոնկրետ մոդելը, քանի որ ստանդարտ Muses 6600 Pro սնուցման աղբյուրի հզորությունը 50կՎտ է:

Այսպիսով՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի, ինչպես նաև հրավերի 8.2 կետի պահանջները, քանի որ առանց տեխնիկական բնութագրիչների վերաբերյալ ամբողջական փաստաթղթերի և հավաստի տեղեկատվության՝ բավարար է գնահատել հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտման, մասնավորապես՝ ձեռք չի բերվում Պատիրատուի կարիքներին համապատասխանող ապրանք:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով նաև Օրենքի 50-րդ հոդվածը, մասնավորապես 2-րդ մասի 1-ին կետը, և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերությունը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար թվային ռենտգեն սարքավորման համալիրի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.04.2020թ.-ի ժամը 16.00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին մերժել «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի հայտը:

Կից ներկայացվում են՝

1. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի պետական ռեգիստրի վկայականի պատճենը,
2. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի տնօրենի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
3. Արտադրող ընկերությունից ստացված նյութերի պատճեն,
4. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Բանկ՝ «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ, Հ/Հ 217002182558001

Առդիր՝ 21 թերթ

Հարգանքով՝
Տնօրեն Բ.Թադևոսյան

23.04.2020թ.